

Տեղեկատվություն
ՀՀ մարզերի և այլ երկրների վարչատարածքային միավորների միջև
համագործակցության վերաբերյալ

Թիվ	Համագործակցություն	Տարեթիվ	Ընթացիկ վիճակ
1.	Համագործակցություն Դիակոնիա բարեգործական հիմնադրամի հետ:	2014թ. հունվար	Մարզի ղեկավարության հետ ձեռք բերված պայմանավորվածության համաձայն Դիակոնիա բարեգործական հիմնադրամը սկսել է մարզում իրականացնել սոցիալապես անապահով, ծնողազուրկ, ազատամարտիկների ընտանիքներին ֆինանսական, սոցիալական աջակցության, բնակարանների վերանորոգման, ուսանողական վարձերի տրամադրման ծրագրեր: Առաջին եռամսյակում շահառու ընտանիքների թիվը 7 է: Նշված բոլոր ծրագրերը շարունակական են:

2.	<p>Մանուկների հիմնադրամի (COAF) կողմից Արտենի համայնքի թիվ 1 դպրոցի տարրականի մասնաշենքի հիմնանորոգում և ստեղծագործարանի հիմնադրում:</p>	<p>2014թ. 23 հունվարի</p>	<p>Մանուկների հիմնադրամի (COAF) կողմից Արագածոտնի մարզի Արտենի համայնքի թիվ 1 դպրոցում կատարվել է տարրականի մասնաշենքի հիմնանորոգում եւ ստեղծագործարանի հիմնադրում: Վերանորոգվել են դասասենյակները, հիմնվել է ատամների մաքրման կայան, կատարվել է նաեւ կահավորումը: Իսկ ստեղծագործարանը հիմնվել է ՎիվաՍԵԼ-ՄՏՍ-ի ֆինանսավորմամբ, որից կօգտվեն դպրոցի բոլոր աշակերտները:</p>
3.	<p>„Հայաստան,, համահայկական հիմնադրամի և Մեծ Բրիտանիայի տեղական մարմնի հետ համատեղ մանկապարտեզի կառուցում Արագածոտնի մարզի Սասունիկ համայնքում:</p>	<p>2014 թ. փետրվար</p>	<p>„Հայաստան,, համահայկական հիմնադրամի և Մեծ Բրիտանիայի տեղական մարմնի ֆինանսավորմամբ Արագածոտնի մարզի Սասունիկ համայնքում կառուցվում է մանկապարտեզ: Ծրագիրը համաֆինանսավորում է Սասունիկի համայնքապետարանը: Երկհարկանի մանկապարտեզն իր հարկի տակ կարող է ընդունել մինչև 90 երեխա:</p>
4.	<p>Հայաստանում Ֆրանսիայի դեսպան Անրի Ռենոյի այցը ՀՀ Արագածոտնի մարզ:</p>	<p>2014 թ. 13 փետրվարի</p>	<p>Արագածոտնի մարզպետ Սարգիս Սահակյանն ընդունեց Հայաստանում Ֆրանսիայի դեսպան Անրի Ռենոյին: Քննարկվեցին երկուստեք հետաքրքրող հարցեր, որոնք վերաբերում էին կրթական ծրագրերին, համայնքների միջեւ նոր համագործակցության հնարավորություններին: Մարզպետի և դեսպանի միջեւ պայմանավորվածություն ձեռք</p>

			<p>բերվեց առաջիկա համագործակցության, համատեղ ծրագրերի իրականացման համար: Մարզի ղեկավարության ուղեկցությամբ դեսպանը այցելեց Կաթնաղբյուրի դպրոց, ուր ուսուցանվում է ֆրանսերեն լեզուն և եղավ Բյուրականի աստղադիտարանում:</p>
5.	<p>Խաղաղության կորպուսի հետո համատեղ ազգային նվազարանների պատրաստական վարպետաց դպրոցի ստեղծում մարզի սահմանամերձ գյուղերում:</p>	<p>2014թ. 20 փետրվարի</p>	<p>Տեղի է ունեցել մարզի ղեկավարության և Խաղաղության կորպուսի ներկայացուցչի հանդիպումը, որտեղ պայմանավորվածություն է եղել մարզի սահմանամերձ գյուղերում համատեղ ստեղծել ազգային նվազարանների պատրաստական վարպետաց դպրոց:</p>
6.	<p>Մասնակցություն ՀՀ-ում Քուվեյթի դեսպանատան կողմից կազմակերպած Քուվեյթի ազատության օրվան նվիրված ընդունելությանը:</p>	<p>2014թ, 26 փետրվարի</p>	<p>ՀՀ -ում Քուվեյթի արտակարգ և լիազոր դեսպան Բասսամ Մուհամմադ ալ-Քաբանդի հրավերով ՀՀ Արագածոտնի մարզի ղեկավարությունը մասնակցել է Քուվեյթի Ազատության օրվա կապակցությամբ ՀՀ-ում Քուվեյթի դեսպանատանը կայացած ընդունելությանը: Հանդիպման ընթացքում պայմանավորվածություն է ձեռք բերվել դեսպան Բասսամ Մուհամմադ ալ-Քաբանդի այցը ՀՀ Արագածոտնի մարզ, որտեղ կքննարկվեն համագործակցության ծրագրեր:</p>
4.	<p>Գերմանիայի, Ավստրիայի և Կանադայի դեսպանատների հետ</p>	<p>2014թ. 3 մարտի</p>	<p>ՀՀ Արագածոտնի մարզի ղեկավարության և Գերմանիայի, Ավստրիայի և Կանադայի դեսպանատների</p>

	<p>պայմանավորվածության ձեռք բերում՝ համատեղ „Տարագ-Ֆեստ,, փառատոնի կազմակերպման վերաբերյալ:</p>		<p>հետ պայմանավորվածություն է ձեռք բերվել համատեղ կազմակերպել „Տարագի փառատոն,, որը կկայանա մայիսի 25-ին, Թալին քաղաքում: Մարտի 11-ին կայացել է աշխատանքային խմբի առաջին հանդիպումը: Քննարկվել են փառատոնի կազմակերպման հետ կապված հարցեր, ստեղծվել են կառուցվածքային հանձնախմբեր, կատարվել է աշխատանքի բաժանում և կազմվել է ժամանակացույց:</p>
8.	<p>ՅՈՒՆԵՍԿՕ-ի „Մասնակցության ծրագիր գործունեության անդամ պետությունների համար,, շրջանակում ներառական նախակրթարանի ստեղծում Թալին քաղաքում:</p>	2014թ. մարտ-2015թ.	<p>ՅՈՒՆԵՍԿՕ-ի „Մասնակցության ծրագիր գործունեության անդամ պետությունների համար,, ծրագրի շրջանակում „Թալինի կանանց ռեսուրս կենտրոն,, զարգացման հիմնադրամի կողմից Թալին քաղաքում ստեղծվելու է ներառական նախակրթարան, որը իրականացնելու է Թալինի տարածաշրջանում ուսուցողական սեմինարներ ծնողների համար, հոգեբանական, սոցիոլոգիական, առողջապահական, զբոսաշրջության թեմաներով ուսուցումներ, խորհրդատվություններ:</p>
9.	<p>ՀՀ-ում Նորվեգիայի հյուպատոս Թիմոթի Սթրեյթի հանդիպիպումը ՀՀ Արագածոտնի մարզպետ Սարգիս Սահակյանի հետ:</p>	2014թ. 17 մարտի	<p>ՀՀ Արագածոտնի մարզպետարանում կայացել է ՀՀ-ում Նորվեգիայի հյուպատոս Թիմոթի Սթրեյթի հանդիպիպումը ՀՀ Արագածոտնի մարզպետ Սարգիս Սահակյանի հետ: Քննարկվել են մայիսի 25-ին Թալին քաղաքում համատեղ</p>

			կազմակերպվող „Տարազի փառատոն,-ի նախապատրաստության հետ կապված հարցեր:
--	--	--	--